«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Վարդուշ Առաքելյան

Մանկապարտեզ՝ Գյումրու «Լիանա-մսուր»մանկապարտեզ

ՀՈԱԿ

2022թ.

Բովանդակություն

Ներածություն.....3
Գլուխ 1. Դերային խաղի առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում:..5
Գլուխ 2. Դերային խաղի պլան 7
Եզրակացություն 9
Գրականության ցանկ 10

Ներածություն

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Խաղի հիմնախնդիրը մշտապես հետաքրքրել է ոչ միայն հոգեբաններին, մանկավարժներին, այլև փիլիսոփաներին, հասարակագետներին, ազգագրագետներին, կենսաբաններին և հոգեթերապևտներին: Քննարկելով խաղային գործունեությունը տարբեր տեսանկյուններից գիտնականները միահամուռ նշում են, որ խաղը մարդկային մշակութային համակարգի ուրույն և անբաժանելի մասն է:

Խաղային գործունեության բացառիկ մանկավարժական նշանակությունը նախադպրոցահասակ երեխաների կյանքում կարևորել են անցյալի ականավոր մանկավարժներ Յ. Ա. Կոմենսկին, ժ. ժ. Ռուսոն, Ֆ. Ֆրյոբելը, Կ. Դ. Ուշինսկին, ինչպես նաև խոշորագույն հյ մանկավարժներ և գրողներ Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը և այլոք: Խ. Աբովյանը հորդորում էր մանկավարժներին չզրկել երեխային անմեղ խաղերից իր «Պարապ վախտի խաղալիք» աշխատության մեջ նա կարևորում է երեխաներին ուրախություն և հաճույք պատճառելու գործում հետաքրքիր զրույցների և մանկական խաղերի դերը:

Մեծն Հ. Թումանյանը գտնում էր, որ խաղը երեխայի «Բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը»:

Խաղի էության ու յուրահակություններին անդրադարձել է հայ մանկավարժական մտքի խոշոր ներկայացուցիչ Ղ. Աղայանը: Նա գտնում էր, որ երեխաներին հրապուրում է շրջապատողների գործունեությունը, և նրանք ցանկանում են վերարտադրել այդ իրենց խաղերում ընդօրինակելով մեծահասակներին:

Խաղի դերն ու նշանակությունը նախադպրոցականի կյանքում մանրամասն ուսումնասիրել և քննարկվել է :

Խաղային գործունեությունը նախադպրոցականի անձնավորության կայացման ներքին գործոն է, որը չի կարող ամբողջապես բացատրվել և ընդհանրացվել, այն բավական սուբյեկտիվ է: /Մարության Ս. Ա. Դալլաքյան, Ա. Մ. Նախադպրոցական մանկավարժություն «Զանգակ 97», 2008թ. /

Հետազոտական աշխատանքի նպատակն է ցույց տալ թե ինչպես են դերախաղերը զարգացնում երեխայի խոսքը, երևակայությունը անհատականության դրսևորումները:

Հետազոտականը կազմված է երկու գլուխներից:

1 գլխի մեջ վերլուծված է դերային խաղի առանձնահատկությունները նախադպրոցականի տարիքում:

2 գլուխը դերախաղի պլանն է:

Գլուխ 1. Դերային խաղի առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում:

Նախադպրոցական տարիքի երեխաների խաղային գործունեության առանձնահատկությունները լավագույնս ներկայացված են Ա. Պ.Ուսովայի, Ռ. Ի. Ժուկովսկայայի և Դ. Վ. Մենջերիցկայայի աշխատություններում որոնք բնութագրելով նախադպրոցականի գործունեության էությունը նշում են դրա ստեղծագործական բնույթը: Նախադպրոցական խաղային գործունեությունը զարգանում է հետևյալ առանձնահատկություններով:

1. Խաղային գործունեության ընթացքին բնորոշ է սյուժե, որն ի հայտ է գալիս 2 տարեկան հասակում և աստիճանաբար բարդանում և հարստանում է: Եթե կրտսեր նախադպրոցականի սյուժեները անկայուն են, փոփոխական, հաճախ նույնիսկ անտրամաբանական, ապա ավագ նախադպրոցականի սյուժեն իրենից ներկայացնում է թեմատիկ բովանդակության տրամաբանական զարգացում և վերլուծություն՝ խաղային կերպարների, գործողությունների միջոցով: Սյուժեի զարգացումը պայմանավորված է մի շարք գործոններով՝ խաղացող երեխաների սոցիալական փորձով, խաղային գործունեության դրդապատճառներով կազմակերպման և ղեկավարման եղանակներով:
2. Խաղային գործունեության նպատակը սոցիալական դերերի յուրացումն է, որն ուղղված է նաև մարդկության հավաքական փորձի փոխանցմանը՝ խաղային փոխհարաբերությունների սոցիալական նմուշների յուրացման եղանակով: Դերային խաղի զարգացումն ընթանում է նախադպրոցականի մտածողության բարձրացման հետ համահունչ, փոխպայմանավորված: Ավագ նախադպրոցական տարիքում երեխան սկզբից պատկերացնում է, մտածում է, վերլուծում է, որից հետո նոր պլանավորում է խաղային գործունեությունը:
3. Ստեղծագործական բնույթի խաղային գործունեությունը նախադպրոցական երեխայի համակողմանի զարգացման և դաստիարակության արդյունավետ միջոց է՝ մանկավարժից պահանջող կազմակերպման վարպետություն և ղեկավարման նրբանկատ հմտություններ: Խաղային գործունեության գրագետ ղեկավարումը ենթադրում է խաղի ընկալում և դիտարկում երեխայի

տեսանկյունից: Նախադպրոցական տարիքի երեխաներին խաղը հրապուրում է իր երկակի բնույթով: Այն և՛ հաճույք է, և՛ լուրջ աշխատանք: Խաղը երեխայի համար «հնարովի» երևակայական գործունեություն է, նա շատ լավ գիտի, որ «սուտի» է խաղում միևնույն ժամանակ նա խաղի ընթացքում իսկապես վերապրում է իրական կյանքի տարբեր իրողություններ, խաղում է ամենայն լրջությամբ և պատասխանատվությամբ: Ստեղծագործական խաղային գործունեության ղեկավարումը պահանջում է անուղղակի միջամտություն՝ ուղղված խաղի ինքնակառավարմանը և երեխաների ներքին կազմակերպվածության բարձրացմանը:

Գլուխ 2. Դերային խաղի պլան

Խումբ՝ - Ավագ

Թեման՝ - Այցելություն բժիշկ Այբոլիտին

Տեսակը՝ դերախաղ

Նպատակը՝

- Կսովորեն վանկատել բառերը
- Կօգտագործեն բարեկիրթ բառեր (բարև Ձեզ, ներեցեք, կարելի է, խնդրեմ, ցտեսություն):

Օգտագործվող նյութեր

- Կապիկի, սկյուռի, շան, ոզնու դիմակներ,
- Բանան, խնձոր, ընկույզ, միս,
- Բժշկի հագուստ, բժշկական գործիքներ:

Ընթացքը

Խթանում

Դաստիարակի օգնականը մոտենում և բերում է մի ծանրոց ու ասում, որ մեզ ծանրոց են ուղարկել:

Դաստիարակն ասում է երեխաներին.

- Եկեք տեսնենք ի՞նչ կա ծանրոցում: Բացելուց հետո տեսնում են կենդանիներին, որոնք հիվանդ են ու եկել են, որ բժիշկ Այբոլիտը իրենց բուժի:

Դաստիարակչուհին հարցնում է երեխաներին.

- Ի՞նչ եք կարծում ի՞նչ է եղել կենդանիներին և ի՞նչու են հիվանդացել կենդանիները::
  - Երեխաները զույգերով քննարկում են:
  - Լսում ենք 2-3 զույգի պատասխան:

Դաստիարակն ասում է.

- Եկեք բուժենք բոլոր հիվանդ կենդանիներին, խնամենք նրանց, տալով մրգեր դեղահաբերի փոխարեն և լսենք կենդանիների գանգատները բարեկիրդ բառերը վանկերով:

Իմաստի ընկալում

Դաստիարակը հագնում է Այբոլիտի հագուստը և բացատրում է կանոնները: Ներկայացնում է, որ ինքը բժիշկ Այբոլիտն է, երեխաները գազանիկներն են, ովքեր հիվանդ են եկել են բժիշկի մոտ:

Երեխաները ընտրում են կենդանիների դիմակները:

Դաստիարակը տալիս է ամբողջական հրահանգ.

- Բժիշկի մոտ գալիս ենք զույգերով և պետք է օգտագործենք բարեկիրթ բառեր և խոսենք վանկերով:

Գալիս է կապիկը թակում է դուռը և վանկերով ասում.

Կա-րե-լի է, «Բարև Ձեզ»:

Բժիշկը պատասխանում է.

- «Բարև Ձեզ», խընդ-րեմ և լսում է գանգատը կապիկի վանկերով արտասանելով:

Կապիկը ասում է.

- Իմ կո-կոր-դը շատ է ցա-վում:

Բժիշկը որպես դեղահաբ տալիս է բա-նան:

Կապիկը հայտնում է շնոր-հա-կա-լութ-յուն և հեռանում է:

Մոտենում են հաջորդ կենդանիները մեկը մյուսին օգնելով:

Կշռադատման փուլ

1. Դուր եկավ խաղը երեխաներ:
2. Խաղի, որ հատվածը դուր եկավ և ինչո՞ւ:
   - Որ գնաք տուն ինչ կպատմեք ծնողներին:

Դերախաղն անցկացվեց «Միջին» խմբում՝ 20 երեխայի մասնակցությամբ:

Դիտարկեցին՝ տնօրենը և մեթոդիստը:

Դերախաղի ավարտից հետո, ըստ իրենց արած դիտարկումների կատարեցին վերլուծություն և ներկայացրին:

Խաղն հասավ իր նպատակին

- Երեխաները սովորեցին վանկատել բառերը և հարստացավ բառապաշարը,
- Երեխաները խաղացին անկաշկանդ, համագործակցելով:

Եզրակացություն

Ուսումնասիրելով դերային խաղի առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում՝ հանգեցի այն եզրակացությանը, որ նախադպրոցական մանկավարժության մեջ առավելագույն դրական արդյունքի համար պետք է կրթադաստիարակչական գործընթացը կազմակերպել այնպես, որ ամեն մի գործունեություն երեխաների մեջ զարգացնի անկաշկանդ համագործակցելու կարողություն, հարստացնի երեխաների բառապաշարը բարեկիրթ բառերով և, որ ամենակարևորն է արդեն դրանց կիրառումը շրջապատի հետ շփվելու ժամանակ:

Այսպիսով՝ անգնահատելի դերային խաղի դերը երեխայի արժեհամակարգի ձևավորման գործում և նրա իրականացման մեթոդները պետք է մշտապես կատարելագործվեն՝ համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին:

Գրականության ցանկ

1. Մարության Ս. Ա. Դալլաքյան, Ա. Մ. Նախադպրոցական մանկավարժություն «Զանգակ 97», 2008թ.